645

1. Արդյոք գիտե՞ս Հիսուսին, մարդ,
Եվ Նրա խաչի մեծ սարսափ,
Դառն արցունքներ հոսեն պիտ արդ,
Դիտեմ Փրկչիս խոր տագնապ:
Տես՝ ինչպես Նրան ծաղրում են զուր
Եվ ապտակում անիրավ,
Բևեռները թափանցում սուր,
Մի, Տիրոջ ահռելի ցավ:

2. Հորդ դառն արցունք եմ թափում ես,
Երբ հիշում եմ, թե վշտոտ
Նա նայում էր չար աշխարհին,
Նրա ճամփեն էր մութ, արնոտ:
Մեռնելիս, տես, հեզ աղոթեց
Խաչողների համար Նա:
Չարչարվեց Նա, տանջվեց պես-պես
Կյանքի վերջում անխնա:

3. Ո՜հ, դու նայի՛ր Հիսուսին հեզ,
Ցած է կախվել Նա խաչից,
Առատ արցունք թափում եմ ես,
Հիշում մահվան Նրա կսկիծ:
Զուր հրճվում են ուժերը մութ,
Նենգ, դաժան ոսոխների,
Վաղ է խրախճանք նրանց, մեզ ինչ փույթ,
Հաղթությունն մեր անթերի:

4. Արշալույսը հարության տե՛ս,
Լսի՛ր երգը գոհության,
Գերեզմանից դուրս եկավ վեհ
Փրկիչ երկրի անսասան:
Դառնությունից ծանր խեղդված արդ
Տապալվեց իշխանն չարի,
Ոչխարները մեծ սիրով հորդ
Ծուտ գտան Հովիվ բարի:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025